




ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ



Ա. Մինասյան Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«03» 05 2017թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 42

Ձեռնարկողը՝

<<Մովարթսպորտիո>> ՍՊԸ

Ք. Երևան, Եկմայրան 6

Գործունեությունը՝

Երևան քաղաքի Գ. Սյրեփանյանի անվան թիվ 135 հիմնական դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ
տնօրեն՝



Վ. Սահակյան

Աղդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 42
«03» 05 2017թ.

«Մովարթստուդիո» ՄՊԸ-ի կողմից ներկայացված Երևանի քաղաքի Գ. Ստեփանյանի անվան թիվ 135 հիմնական դպրոցի կառուցման նախնական գնահատման հայտ

Պատվիրատու՝	«Մովարթստուդիո» ՄՊԸ
Ներկայացված նյութեր՝	Նախնական գնահատման հայտ և կից փաստաթղթեր
Տեղադրման վայրը՝	ք. Երևան
Գործունեության կատեգորան՝	«Գ»

Երևանի թիվ 135 դպրոցի կառուցումն իրականացվելու է Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում (ԴՄԱԲՇ) Ասիական Ջարգացման Բանկի աջակցությամբ արդյունքների վրա հիմնված վարկավորման (ԱՀՎ) մոդելի կիրառմամբ:

Ծրագիրը համահունչ է ՀՀ կառավարության «Աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության» նպատակներին և ուղղված է երկրի սեյսմակայունության ապահովմանը, անհատական և հասարակական անվտանգության մակարդակի բարձրացմանը, և երկրի կայուն զարգացմանը:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է ք. Երևանում, որը տեղակայված է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում, ծովի մակերևույթից 900-1250մ բարձրության վրա:

Գործունեությունը նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանում՝ Երևանի թիվ 135 հիմնական դպրոցի տարածքում:

Երևանի թիվ 135 հանրակրթական դպրոցին հատկացված տարածքը գտնվում է Նոր Նորքի վարչական շրջանում, Նելսոն Ստեփանյան փողոց 5 հասցեում գտնվող նախկին թիվ 135 դպրոցի տեղում: Նախկին դպրոցի քանդման աշխատանքներն իրականացվելու են ՀՀ-ի կառավարության N 862-Ա (25 օգոստոս 2016թ.) որոշման համաձայն, ըստ որի քանդման աշխատանքների կազմակերպումն ու աշխատանքների կատարման գործընթացն իրականացնում է ՀՀ կառավարությանն առընթեր Պետական գույքի կառավարման վարչությունը:

Քանդման աշխատանքների ընթացքում առաջացած շինարարական աղբը նախատեսվում է տեղափոխել դպրոցի տարածքից 13կմ հեռավորության վրա գտնվող Սպանդարյան արդյունաբերական հանգույցի տարածքում գտնվող քաղաքային աղբավայր, որի վերաբերյալ առկա է Երևանի քաղաքապետարանի համապատասխան որոշումը (Ն2391-Ա, 2016թ. հունիսի 30):

պատրաստ

5

օրինակ



Երևանի թիվ 135 դպրոցի ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է 4104.2մ², իսկ ընդհանուր հողատարածքի մակերեսը 7993,5մ²:

Կառույցի առավելագույն չափերն ըստ առանցքների կազմում են 79.2մx66.6մ, իսկ առավելագույն բարձրությունը՝ 14.3մ: Կարկասը նախագծված է շրջանակային սխեմայով միաձույլ տարերից: Լայնական և երկայնական ուղղություններով տեղադրվող համակարգը ստեղծում է տարածական կարկաս, որը ծածկերի կոշտ սկավառակների հետ միասին իր վրա է վերցնում սեյսմիկ ազդեցությունները: Պատերը նախատեսվում է իրականացնել կարկասի լիցքի ձևով բլոկային քարերով, որոնք մետաղական կեռիկներով ամրակցվում են հիմնական երկաթբետոնե կոնսրուկցիային: Հիմքերը նախատեսվում է իրականացնել միաձույլ երկաթբետոնե խաչահատվող ժապավեններով:

Համաձայն աշխատանքային նախագծի, մոտեցումը դպրոցին, ինչպես նախկինում, իրականացվելու է Թոթովենց փողոցից (տարածքի գլխավոր հատակագիծը բերված է հավելված 2-ում): Դպրոցը փողոցից տարանջատվում է գոյություն ունեցող կանաչ ծառապատ գոտով:

Նախկին դպրոցը բաղկացած էր տարբեր հարթակների վրա տեղադրված երեք մասնաշենքերից, որոնք միացված էին աստիճանավոր անցուղիներով: Նախագծվող դպրոցը լուծված է մեկ միասնական շենքում տեղավորված 3.3մ երկու հարթակներով՝ 1 հարկի տարբերությամբ (տեղանքի բացարձակ նիշերի տարբերությունը անցնում է 5 մետրից), որոնք ստեղծում են ծավալատարածական հետաքրքիր կոմպոզիցիա համահունչ ինչպես տեղանքի ռելիեֆի, այնպես էլ հարակից տարածքի հետ:

Դպրոցը կառուցվում է որպես միաձույլ ե/բ կարկասային 40-40 սմ հորիզոնական հատույթի ամբողջական պատային կրող համակարգ, որի արտաքին պատերը իրականացվում են տուֆ քարերով կարկասի լիցքի կերպով: Շենքը եռահարկ է՝ 3.3 մ հարկերի բարձրությամբ, բացառությամբ հանդիսությունների դահլիճի և մարզադահլիճի:

Հատակագծային մշակումներում հաշվի է առնվել տարբեր հարկերի 1-4 դասարանների բլոկ-սեկցիաների և 5-9-րդ դասարանների բլոկ-սեկցիաների տեղադրման պայմանները: Ապահովված է նրանց միմյանցից ֆունկցիոնալ շահագործման մեկուսացվածությունը: Բացառված են տարբեր տարիքային խմբերի ուսումնական բլոկների միջով խաչվող կապերը: Առանձնացված են նախասրահները, ռեկրեացիոն տարածքները, միջանցքները, մուտքերն ու տարհանման ելքերը:

Ուսումնական գործառույթներն իրականացվում են նախատեսված բոլոր երեք հարկերում: Տարրական դասարանցիների համար տեղադրված են խաղասենյակ-դասարաններ, ննջարան-խաղասենյակներ, դասարաններ՝ առանձին խմբային պարապմունքների հնարավորությամբ, թուլակազմ երեխաների քնի կազմակերպման հատուկ սենյակներ, աշխատանքի, մոդելավորման տեխնիկական խաղալիքների և կիրառական արվեստի սենյակ, ռեկրեացիոն տարածքներ, մեթոդական կաբինետ-ուսուցչանոց, սանհանգույցներ բոլոր հարկերում:

5-9-րդ դասարանցիների համար նախատեսված են համակողմանի նշանակության ուսումնական կաբինետներ, բնական գիտությունների կաբինետներ, լաբորատորիաներ, մասնագիտացված օտար լեզուների, համակարգչային և հաշվիչ տեխնիկայի դասարաններ, նկարչության և գծագրության կաբինետներ, վարչական նշանակության սենյակներ, բժշկի կաբինետ՝ պրոցեդուրային սենյակով, ատամնաբույժի կաբինետ: 5-9-րդ դասարանցիների համար նախասրահին կից նախատեսված է հանդերձարան, իսկ տարրական դասարանի աշակերտների համար դասասենյակներին կից պահարաններ:

Հանդիսությունների դահլիճը տեղադրված է երրորդ հարկում, ունի 20մx24մ հատակագծային առանցքային չափեր և մինչև ծածկի կրող կոնստրուկցիան 6.35մ բարձրություն: Ներառված է բեմական մասը, դերասանական սենյակները, գույքի պահեստը:



Դահլիճին կից նախատեսված է ճեմասրահ՝ սարքավորված դեպի բակ իջնող տարհանման աստիճաններով:

Ռելիեֆի առանձնահատկությամբ պայմանավորված մարզադահլիճը տեղակայված է շահագործման տեսանկյունից առավել նպատակահարմար 2-րդ հարկի նիշին համապատասխան հարթության վրա տեղադրված՝ հատակագծում 18.0x30.0մ առանցքային չափերով և մինչև ծածկի կոնստրուկցիաները 6.05մ բարձրությամբ ծավալում:

Դահլիճին կից նախատեսված է մարզագույքի շենք, մարզչի սենյակ, աշակերտների հանդերձարաններ՝ սարքավորված սանհանգույցով և ցնցուղարաններով: Դահլիճն ունի անմիջական կապ նույն հարթության մեջ գտնվող բացօթյա մարզահրապարակի հետ՝ սարքավորված ժամանակակից մարզագույքով:

Նախատեսված են նաև շախմատի դասարան, ռազմագիտության, շարային պարապմունքների, աշխատանքի ուսուցման դասասենյակներ, հրաձգարան և գրադարան:

Ճաշարանը տեղավորված է 1-ին հարկում, արտադրական մասի համար նախատեսված տրանսպորտային մոտեցման առանձնացված տեխնիկական մուտքով: Ճաշարանն ունի 240մ² մակերես, տարանջատված է երկու խմբերի առանձնացված լվացարաններով:

Տանիքը լանջավոր է արտաքին ջրահեռացմամբ: Տանիքի կրող կոնստրուկցիաները նախատեսված են ուղղանկյուն կտրվածքով խողովակների պողպատե պրոֆիլներից: Ծածկույթը նախատեսված է կրկնակի ծավալածքով հարթ նիկելապատ թիթեղից:

Նախագծային լուծումներում հատուկ ուշադրություն է դարձված արևի նկատմամբ դասասենյակների պատուհանների կողմնորոշման պահանջներին: Աշակերտական սեղանների աշխատանքային մակերեսներն արևի ուղղակի ճառագայթներից պաշտպանվելու համար նախատեսված են շերտավարագույրներ:

Դպրոցն ապահովված է հաշմանդամություն ունեցող անձանց ուսման հիմնական պահանջներին:

Նախատեսված է տեսահսկման համակարգ, որի օգնությամբ կիրականացվի դպրոցի ներքին և արտաքին հսկողությունը, ինչպես նաև հրդեհային ազդարարման ավտոմատ համակարգ:

Նախատեսվող դպրոցի տարածքը մեկուսացված է տրանսպորտային կենտրոնական հաղորդակցուղիներից, պաշտպանված է աղմուկից, որին նկատելի առավելություն է տալիս հարակից քաղաքային նշանակություն ունեցող այգու առկայությունը:

Գլխավոր մուտքի դիմաց նախատեսված է սալարկված տարածք համադպրոցական միջոցառումների կազմակերպման համար: Մարզադահլիճին կից հիմնական դասարանական խմբերից հեռու նախատեսված է բացօթյա ուսումնամարզական խաղահրապարակ: Տարածքում շրջանցիկ ճանապարհները ասֆալտապատ են և սալարկված: Տարածքը ցանկապատված է: Նախատեսված է բարեկարգել և լրացնել կանաչապատ տարածքները:

Ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացներն իրականացվում են գործող շինարարական նորմերի ու կանոնների, ինչպես նաև «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանների համաձայն:

Դպրոցի ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել ինչպես և նախկինում՝ Ն. Ստեփանյան փողոցով անցնող քաղաքային ջրագծից (ջրածախսը՝ 2.64 լ/վրկ):

Նախատեսվում է իրականացնել տաք և սառը ջրամատակարարում, կոյուղու ջրահեռացման ցանց, ինչպես նաև հակահրդեհային սնուցող ցանց՝ շենքի նկուղային հարկում: Կոյուղու համակարգը նույնպես կիրականացվի գոյություն ունեցող քաղակային կոյուղու ցանցով:

Տաք և սառը ջրամատակարարման նպատակով կկիրառվեն Փ=15-40մմ պոլիպրոպիլենային այլումինե շերտով, և 50 ու 75 մմ տրամագծերով մետաղական



խողովակներ: Նկուղային հարկում խողովակները նախատեսվում է մոնտաժել առաստաղի տակ:

Տաք ջրի պատրաստումը ինչպես նախկինում կկատարվի գոյություն ունեցող կաթսայատանը: Մակայն կաթսայատանից բացի, նախատեսված է նաև տաք ջրի պատրաստում իրականացնել տանիքում նախատեսված արևային ջրատաքացուցիչների միջոցով: Տանիքում արևային ջրատաքացուցիչներում ջուրը տաքանալուց հետո տրվում է կաթսայատանը նախատեսված 1000 մ³ տարողությամբ բաք և կօգտագործվի դպրոցի կարիքների համար: Այն օրերին, երբ արևային ջրատաքացուցիչները լրիվ չեն հասցնի տաքացնել ջուրը, ջրի տաքացումը կկատարվի կաթսայատանը նախատեսված արագընթաց ջրատաքացուցիչների միջոցով: Տաք ջրի անխափան մատակարարումն ապահովելու նպատակով կաթսայատանը նախատեսված են էլեկտրոնային սարքեր, որոնք կկարգավորեն արևային ջրատաքացուցիչների փոխարինումը արագընթաց ջրատաքացուցիչներով կամ հակառակը:

Դպրոցի ջեռուցումը նախատեսվում է իրագործել գոյություն ունեցող կաթսայատան միջոցով: Դպրոցի վերանախագծման արդյունքում կաթսայատանը գոյություն ունեցող հին կաթսաները նախատեսվում է փոխարինել նորերով: Այդ նպատակով կտեղադրվեն 60% հզորության 2 կաթսաներ՝ յուրաքանչյուրը 420կվտ (Q=361200 կկալ/ժամ) ջերմային հզորությամբ: Որպես հիմնական վառելիք կկիրառվի բնական գազը: Բնական գազով կաթսայատան շահագործման ընթացում մթնոլորտային օդ արտանետված վնասակար գազերի գետնամերձ քանակները կգտնվեն թույլատրելի նորմերի սահմաններում:

Վառելիքի այրման ընթացքում առաջացած ծխագազերի հեռացումը կկատարվի գոյություն ունեցող ծխնելույզի միջոցով, որը համապատասխանում է СНиП 2.04.05-91 պահանջներին (d=250մմ, H=12 մ):

Կաթսայատանը ջրապատրաստման գործընթաց չի նախատեսվում, ինչը բացառում է արտադրական հոսքաջրերի առաջացումը:

Նախատեսված է իրականացնել երկխողովականի ջեռուցման համակարգ՝ ներքին և վերին բաշխումով ջրի փակուղային շարժմամբ: Որպես ջեռուցման սարքեր ընտրված են ալյումինե ջեռուցման մարտկոցներ (H=500մմ, H=600մմ):

Օդափոխությունը շենքում նախատեսված է ըստ ՀՀ գործող նորմերի: Դասասենյակներում նախատեսված են օդանցքներ, որոնք դասամիջոցներին բացում են մաքուր օդի ներածման համար, իսկ միջանցքներում նախատեսված են արտածման համակարգեր, որոնց միջոցով կատարվում է օդի արտածումը:

Առանձին ներածման-արտածման համակարգեր են նախատեսված խոհանոցի, ճաշարահի, հանդիսությունների սրահի, ֆիզկուլտուրայի դահլիճի, տնօրենի կաբինետի, քիմիայի կաբինետների, թուլակազմ երեխաների քնի կազմակերպման սենյակների, երգ-երաժշտության և պարի խմբակների համար:

Սանհանգույցներից օդը հեռացվում է մեխանիկական կանալային օդամղիչների միջոցով:

Դպրոցի կառուցման շրջանակներում կատարվող շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ ծավալով հողային աշխատանքներ (ներառյալ 0.00 նիշից ցածր հիմքերի քանդումը).

- Հանույթ - 14893մ³, որից տեղափոխվող հանույթը կազմում է 12196 մ³:
- Լիցք - 2493 մ³:

Ընդամենը՝ 17386 մ³:

2016թ հունիսի 30-ի Ն2391-Ա Երևանի քաղաքապետի որոշմամբ «Ղավարս» լիցենզավորված ընկերության հետ կնքված պայմանագրի հիման վրա, հողային հանույթը նախատեսվում է տեղափոխել կառուցապատվող տարածքից 13 կմ հեռավորության վրա գտնվող Սպանդարյան արդյունաբերական հանգույցի տարածքում գտնվող քաղաքային աղբավայր:



Շինարարական հրապարակը ներառյալ շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման վայրերը, շարժական տնակը և այլն կազմակերպվելու է բացառապես դպրոցի վարչական տարածքի սահմաններում:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել լիցենավորված շինարարական ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից:

Նախատեսվող գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա կանխատեսվող ազդեցությունը ներկայացվում է երկու՝ շինարարության և շահագործման փուլերով:

Շինարարական աշխատանքների ընթացքում անհրաժեշտ ջրի քանակը նախատեսվում է վերցնել տարածքում գոյություն ունեցող ջրագծից: Շինարարական աշխատանքների ընթացքում ծառերի հատում չի նախատեսվում:

Հետշինարարական փուլում հնարավոր բնապահպանական ազդեցությունները կարող են առաջանալ ջեռուցման շրջանում կաթսայատան շահագործման ընթացքում, սակայն համաձայն արտանետվող վտանգավոր նյութերի քանակների հաշվարկի, վնասակար նյութերի քանակները սահմանային թույլատրելի նորմերի սահմաններում են:

Եզրահանգում

Ներկայացված նախնական գնահատման հայտով նախատեսված աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են ազդեցության նվազեցմանն ուղղված բավարար միջոցառումներ՝ մթնոլորտային օդի, հողային ռեսուրսների, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության վերաբերյալ:

Նախատեսվող գործունեության հիմնական ազդեցությունը պայմանավորված է շինարարության փուլով, ինչը չունի զգալի ազդեցություն և կրում է ժամանակավոր բնույթ:

Այսպիսով իրականացվող աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

Փորձաքննական պահանջ

- Շինարարության ընթացքում առաջացած շինադբը, կենցաղային ադբը, անհրաժեշտ է հեռացնել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Մովարթստուդիո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Երևան քաղաքի Գ. Ստեփանյանի անվան թիվ 135 հիմնական դպրոցի կառուցման նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջի պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ



Չ. Զուռնայան